ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ
(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 10 շենք)

Դիմող՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ
Ի դեմս՝ 1.2 «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Կուսակցության գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 30

Ի դեմս՝ 2. «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Կուսակցության գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բայրոնի 3, տարածք 1)

Դիմողի ներկայացուցիչներ՝ Արծվիկ Գարեգինի Մինասյան
(նույնականացման քարտ՝ 008274078, 011-ի կողմից,
տրված՝ 26.03.2018թ.-ին, դիպլոմ՝ A № 062313, գրանցման համար՝ 71358)

Հովհաննես Վլադիմիրի Խուդոյան
(նույնականացման քարտ՝ 009991282, 004-ի կողմից,
տրված՝ 21.02.2018 թ.-ին,
ՓԳ արտոնագիր՝ թիվ 2040)

Տաթևիկ Արամի Սողոյան
(նույնականացման քարտ՝ 005881453, 004-ի կողմից,
տրված՝ 19.01.2017 թ.-ին, ՓԳ արտոնագիր՝ թիվ 3840)
Դիմողի ներկայացուցիչների ծանուցման վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մոսկովյան 24, 4ա

Պատասխանող՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գևորգ Քոչարի փող., 21ա շենք)

ԴԻՄՈՒՄ

2026թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին

(I) Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող են դիմել Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺ.
ՄՏԻՑ ԹԻՎ 3-75
«19» 06 2026թ.

կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

(II) Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով.

Սույնով դիմողը խնդրում է Սահմանադրական դատարանին անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետությունում 2026թ. հունիսի 7-ի Ազգային ժողովի ընտրությունների (այսուհետ՝ Ընտրությունների) արդյունքները, քանի որ նախընտրական քարոզչությունը և քվեարկությունն իրականացվել է ընտրություններ հավասար և ազատ Ընտրական իրավունքի սկզբունքի խախտմամբ, իսկ ընտրությունների արդյունքները ամփոփելիս Կենտրոնական ընտրական հանձնաժողովը խախտել է օրինականության սկզբունքը և կայացրել «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքին հակասող որոշում:

(III) Սույն դիմումի հիմնական փաստարկներն են՝

Ա. Ինստիտուցիոնալ վարչական ռեսուրսի չարաշահումներ

1. Պետության չեզոքության արգելքի խախտումները՝ ի դեմս արտոնությունների սահմանման և դրանց կիրառման իշխող կուսակցության քարոզչության մեջ. կենսաթոշակ, ապահովագրություն, գյուղատնտեսական վարկեր
2. Իրավապահ համակարգի կողմնակալ աշխատանքը և ներգրավումը քարոզչությանը
3. Իշխող կուսակցության կողմից նախընտրական հիմնադրամում չներառված ծախսերը, կասկածելի գործարքները և կորպորատիվ հովանավորչությունը
4. Պետական մարմինների և ՏԻՄ ծառայողների, ինչպես նաև կրթական հաստատություններում դասավանդողների և սովորողների ներգրավումը քարոզչությանը, ԿԸՀ և իրավապահ համակարգի անգործությունը
5. Կողմնակալ լուսաբանում հանրային տեսալսողական մեդիայում և կարգավորող մարմնի ոչ պատշաճ արձագանքը.
6. Ընտրական հանձնաժողովների անդամների կողմից քարոզչության իրականացում և ԿԸՀ անգործությունը

Բ. Ընտրությունների հաշվարկային անճշտություններ

7. Անճշտություններ տեղամասերում ընտրողների ստորագրված ցուցակներում

Հիմնական կարգավորումներ

Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի (...) ընտրությունները, (...) անցկացվում են ընդհանուր, **հավասար, ազատ** և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ **գաղտնի** քվեարկությամբ:

ՄԻԵԿ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ողջամիտ պարբերականությամբ անցկացնել ազատ ընտրություններ՝ գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կարծիքի **ազատ** արտահայտումը օրենսդիր մարմնի ընտրության հարցում»:

Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կողմից 2016թ. ընդունվել է «Ընտրական գործընթացների ժամանակ վարչական ռեսուրսների չարաշահումը կանխարգելելու և դրան արձագանքելու վերաբերյալ» համատեղ ուղեցույցը[1] (այսուհետ նաև՝ Ուղեցույց), որի առանձին կանոններին հղում կարվի հաջորդող փաստարկներում:

<u>Ա. Ինստիտուցիոնալ վարչական ռեսուրսի չարաշահումներ</u>

1. Պետության չեզոքության արգելքի խախտումները՝ ի դեմս արտոնությունների սահմանման և դրանց կիրառման իշխող կուսակցության քարոզչության մեջ. կենսաթոշակ, ապահովագրություն, գյուղատնտեսական վարկեր

Ինստիտուցիոնալ վարչական ռեսուրսի չարաշահումը և նախընտրական փուլում ընտրողների կամքի ձևավորման վրա պետական միջոցներով ոչ պատշաճ ազդեցությունը միջազգային պրակտիկայով և Ուղեցույցով արգելված մեթոդներից է:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վերաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) ընդհանուր նախաձեռնությամբ Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը (այսուհետ՝ Միջազգային դիտորդական առաքելություն) իր 2026թ. հունիսի 8-ի հրապարակված նախնական եզրակացություններում[2] ընդգծել է, որ ընտրություններից առաջ կառավարության կողմից ստորև թվարկվված հայտարարված կամ ներդրված մի շարք սոցիալական և տնտեսական միջոցառումները լայնորեն ընկալվել են որպես իշխող կուսակցությանը նպաստող քայլեր:

1.1. Առողջության համընդհանուր ապահովագրության ներդրումը

Ընտրությունների ընթացքում Առողջության համընդհանուր ապահովագրության (այսուհետ՝ ԱՀԱ) համակարգի ներդրումը օգտագործվել է որպես վարչական ռեսուրսի չարաշահման գործիք՝

[1] Joint Guidelines for Preventing and Responding to the Misuse of Administrative Resources During Electoral Processes https://odihr.osce.org/odihr/elections/227506

[2] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ 7 հունիսի 2026թ. https://odihr.osce.org/sites/default/files/documents/official_documents/2026/06/ARM%20Parliamentary%202026_PS_08.06.2026_ARM.pdf

խախտելով ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով երաշխավորված հավասար և ազատ ընտրական իրավունքի սկզբունքները:

Թեև ԱՀԱ ներդրումը նախատեսված է եղել Կառավարության 2021-2026թթ. ծրագրով, տվյալ ժամանակահատվածում համակարգի կայուն գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և աղբյուրներ առկա չեն եղել, ինչը փաստվում է ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 698-Ն որոշմամբ պետության պահուստային ֆոնդից հատկացված 65 միլիոն դրամի հատկացումով:

Թեև 2025թ. դեկտեմբերի 3-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ 65+ տարեկանների համար կենսաթոշակների բարձրացում չի լինի, իսկ այդ միջոցները (շուրջ 10,400 դրամ) կուղղվեն ԱՀԱ ապահովագրական ծածկույթին, 2026թ. մարտի 5-ին ընտրությունների նշանակումից հետո, Կառավարությունը հակասեց իր իսկ տրամաբանությանը՝ միաժամանակ իրականացնելով թե՛ 10,000 դրամի թոշակի բարձրացում, թե՛ պետբյուջեի հաշվին ապահովագրավճարների 100%-ոց փոխանցում:

«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախընտրական ամբողջ ժամանակահատվածում միլիարդավոր դրամների բյուջետային միջոցներ տնօրինող մարմինը գտնվել է ոչ թե անկախ կառավարման, այլ Վարչապետի կողմից անմիջապես նշանակված ժամանակավոր խորհրդի վերահսկողության ներքո: Այսպիսով, 2026թ. հունվար-մայիս ամիսներին Կառավարությունը պետական միջոցներով իրականացրել է ընտրողների ուղղակի ֆինանսական մոբիլիզացիա: Նշված գործընթացը ընտրողների մոտ ձևավորել է այն համոզմունքը, որ այս կենսական ծառայությունների շարունակականությունը կապված է բացառապես գործող իշխանության վերընտրվելու հետ, ինչն անհամատեղելի է ազատ և հավասար ընտրությունների սահմանադրական պահանջների հետ:

1.2. Կենսաթոշակների բարձրացումը

Ինչպես վերը նշվեց 2025թ. դեկտեմբերի 3-ին վարչապետ Ն. Փաշինյանը Ազգային ժողովի ամբիոնից հայտարարեց, որ կենսաթոշակների բարձրացում չի սպասվում, և որ այդ ֆինանսական միջոցները (ամսական շուրջ 10,400 ՀՀ դրամ) ուղղվելու են 2026թ. հունվարից ներդրվող համընդհանուր առողջապահական ապահովագրության համակարգին[3], մինչդեռ 2026թ. մարտի 5-ին՝ Ընտրությունների նշանակումից ընդամենը մեկ ամիս անց, Կառավարությունը ընդունեց որոշում, որով **2026 թվականի ապրիլի 1-ից** (քվեարկությունից 2 ամիս առաջ) աննախադեպ չափով բարձրացրեց կենսաթոշակներն ու նպաստները:

1.3. Ագրոպարենային ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը

2026 թվականի ապրիլի 9-ին՝ Ընտրությունների նշանակման մասին Նախագահի հրամանագրի հրապարակումից երկու ամիս անց, Կառավարությունն ընդունել է **N 468-Լ որոշումը՝**

[3] *«Թոշակառուին ինչո՞ւ տանք էդ 10 հազար դրամը, որ չիմանա՞ ինչպես փողն արդյունավետ ծախսի. գնա դեղատուն, սխալ դեղ գնի՞»*. Փաշինյան (տեսանյութ). 168.am. https://168.am/2025/12/03/2322550.html

«Ագրոպարենային ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին»: Սույն որոշմամբ Կառավարությունը սահմանել է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների ամբողջական կամ մասնակի սուբսիդավորում, ինչը գործնականում նշանակում է գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիների համար **զրոյական տոկոսադրույքով վարկային միջոցների** հասանելիություն անմիջապես նախընտրական փուլում:

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի **«Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելման համատեղ ուղեցույցների»** (2016թ.) 1.1 և 1.3 կետերի համաձայն՝ *«Իշխանության մարմինները չպետք է օգտագործեն պետական միջոցները կամ կարգավորող լիազորությունները քաղաքական կամ ընտրական նպատակներով... Ընտրություններից անմիջապես առաջ պետական բյուջեից խոշոր սոցիալական վճարների կամ պարգևավճարների անսպասելի բաշխումը, որը հստակորեն նախատեսված չի եղել տարեկան պլանավորմամբ, հանդիսանում է ինստիտուցիոնալ վարչական ռեսուրսի անթույլատրելի չարաշահում»*:

Միջազգային դիտորդական առաքելության նախնական եզրկացությունը ևս հաստատում է, որ այս սոցիալական և տնտեսական միջոցառումները **«առավելություն են ստեղծել իշխող կուսակցության համար և խաթարել են քարոզչություն իրականացնելու հավասար հնարավորությունները, ինչը** հակասում է **ԵԱՀԿ պարտավորություններին»**:

2. Իրավապահ համակարգի կողմնակալ աշխատանքը և ներգրավումը քարոզչությանը

Մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ինչպես նաև ընտրության և դրա նախորդող օրը քննչական մարմինները, ծառայողական պարտականությունների կատարման պատրվակով, զբաղվել են բացահայտ հակաքարոզչությամբ ընտրություններին մասնակցող ուժերի դեմ, ինչպես նաև ապօրինի միջամտությամբ քարոզչական նյութեր են մատակարարել, որն օգտագործվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների կողմից:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն

1.1. նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:

Օրենսգրիք 23-րդ հոդվածի համաձայն՝

Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների, նյութական և մարդկային ռեսուրսների օգտագործումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:

Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝

3) ... քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննչական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ, քննիչներ).

Ուղեցույցի 3-րդ կետով սահմանված անկողմակալության սկզբունքի համաձայն՝ Օրենսդրությունը պետք է հստակ պահանջներ նախատեսի քաղաքացիական ծառայողների համար՝ ողջ ընտրական գործընթացի ընթացքում իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս անկողմնակալ գործելու վերաբերյալ: Նման կարգավորումները պետք է ամրագրեն քաղաքացիական ծառայության անկողմնակալությունն ու պրոֆեսիոնալիզմը:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը հիմնվում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների վրա:

Նույն օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է քաղաքական չեզոքության պահանջները.

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

2. Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող):

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:

2. Քննչական կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Քննչական կոմիտեի ծառայողը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Դեռևս մինչև նախընտրական քարոզչության սկիզբը նկատվել է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն իր գործունեության վերաբերյալ հանրային հաշվետվություններ ներկայացնելիս հստակ թիրախավորում է ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած քաղաքական ուժերին: Այսպիսի վարքագիծը դրսևորվել է պահպանվել է ընտրական ամբողջ գործընթացքում: Քաղաքական ուժերին թիրախավորել է նաև ՀՀ քննչական կոմիտեն:

Ընտրությունների վրա հնարավոր ապօրինի միջամտությունը մեղմելու նպատակով 20.05.2026թ. «Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանի կողմից ՀՀ ԿԸ հանձնաժողովին և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին հասցեագրվել են նույնաբովանդակ դիմումներ՝ խնդրելով բացառել հետագա հրապարակումներում քաղաքական կուսակցությունների կամ դաշինքների անունների հրապարակումները, ինչպես նաև զերծ մնալ այնպիսի բովանդակության տարածումից, որը չունի իրավական նշանակություն, սակայն կարող է ազդել ընտրողի կամքի վրա:

Նույն օրը ստացվել է ԿԸՀ պատասխանն այն մասին, որ *«Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրությամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտե եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ խնդրելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով, նշված կառույցների կողմից տարածվող հաղորդագրություններում զերծ մնալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների անվանումները հիշատակելուց»:*

02.06.2026թ. ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պատասխանը, որում ի թիվս այլնի, նշվել է, «*Ինչ վերաբերում է Ձեր դիմումում վկայակոչված նորմերին, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի դրույթներին, ապա հարկ է նշել, որ տվյալ իրավակարգավորումները չեն կարող վերաբերել Կոմիտեի լիազորությունների իրականացմանը, այդ թվում՝ հանցագործությունների կանխարգելման գործառույթին*

...

Ինչ վերաբերում է հրապարակումներում քաղաքական կուսակցությունների անվանումների հիշատակմանը, ապա պետք է արձանագրել, որ դրանք հանդիսանում են քրեական վարույթներով պարզված փաստական տվյալներ և այլ էական հանգամանքների հետ միասին հրապարակվում են համապատասխան տրամաբանության շրջանակում՝ բացառապես կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների կանխարգելման նպատակով, ուստի Ձեր ներկայացրած դիտարկումները քննարկվող համատեքստում նույնպես հիմնավորված չեն»:

Պատասխանում չի եղել որևէ բացատրություն իրավական նշանակություն չունեցող տեքստերի հրապարակման կապակցությամբ:

Ներկայացված պատասխանները, ինչպես նաև առանձին հարցերին պատասխանների բացակայությունը, քվեարկության օրվան նախորդող երկու ամիսների մոնիթորինգը ցույց է տալիս, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն և ՀՀ քննչական կոմիտեն հնարավորություն են ունեցել իրենց պարտականությունների կատարումն իրականացնել առանց նախընտրական քարոզչությանը միջամտելու, սակայն նույնիսկ զգուշացումից հետո հրաժարվել էն պահպանել չեզոքությունը:

Համեմատության համար՝ ՀՀ ներքին գործների նախարարությունը նախընտրական քարոզչության ընթացքում պարբերաբար հաշվետվություններ է ներկայացրել ենթադրյալ

հանցանքների դեպքերի և ոստիկանության աշխատանքի մասին, հանրությանը իրազեկել է ընտրական գործընթացների և իրավախախտումների անթույլատրելիության մասին, սակայն որևէ ուժի չի թիրախավորել:

Քննչական մարմինների միջամտությունը ընտրական գործընթացին, ըստ էության, իրականացվել է նույն սցենարով և հետևյալ հերթականությամբ.

• Նախ իրականացվում են գաղտնալսումներ:

• Այնուհետև հրապարակվում է ենթադրյալ հանցանքի մասին հաղորդագրություն, որտեղ հատուկ ընդգծվում է տվյալ քաղաքական ուժի կամ նրա ներկայացուցիչների անունը:

• Դրանից հետո հրապարակվում են գաղտնալսված խոսակցությունների առանձին, խմբագրված հատվածներ: Հաճախ դրանք ներառում են ոչ միայն գործին առնչվող, այլև լրիվ այլ թեմաներով զրույցներ, կենցաղային կամ անձնական արտահայտություններ, վիրավորանքներ և այնպիսի տեղեկություններ, որոնք մարդկանց ներկայացնում են բացասական լույսի ներքո, սակայն որևէ կապ չունեն մեղսագրվող արարքի հետ:

• Վերջապես, այդ հատվածներն անմիջապես օգտագործվում են իշխող քաղաքական ուժի կողմից՝ որպես քարոզչական նյութ՝ քաղաքական հակառակորդներին վարկաբեկելու նպատակով:

Օրինակ, հրապարակված ձայնագրություններից մեկում որոշակի խումբ մարդկանց նկատմամբ օգտագործվում է «շուն-շանգյալ» արտահայտությունը, որի առկայությունը մեղսագրվող արարքի համար չունի ոչ պատասխանատվությունը մեղմացնող, ոչ ծանրացնող նշանակություն, չի օգնում ավելի լավ հասկանալ ենթադրյալ հանցավոր արարքի սխեման կամ ընթացքը, այլ ակնհայտորեն դիտավորյալ արտահոսք է նախաքննական նյութերից, որպեսզի քաղաքական ուժն այն օգտագործի իր քարոզչության մեջ: Հրապարակումից կարճ ժամանակ անց նշված արտահայտությունը օգտագործելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԱԺ ամբիոնից վիրավորել է մի քանի քաղաքական ուժերի համակիրներին:

Քննչական մարմինների հաղորդագրությունների ժամանակագրությունը, դրանցում ոչ անհրաժեշտ արտահայտությունների արտահոսքը և դրա օգտագործումը նախընտրական քարոզչության մեջ նկարագրված է դիմումի 1-ին հավելվածում:

3. Իշխող կուսակցության կողմից նախընտրական հիմնադրամում չներառված ծախսերը, կասկածելի գործարքները և կորպորատիվ հովանավորչությունը

3.1. Անհատույց օգտագործման տարածքներ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացրած նախընտրական հիմնադրամի հաշվետվությունը պարունակում է ակնհայտ կասկածելի գործարքներ, որոնք վկայում են, որ կուսակցությունը փաստացի իրականացրել է հայտարարագրվածից զգալիորեն ավելի մեծ ծախսեր՝ խախտելով Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Մասնավորապես, կուսակցությունը հայտարարագրել է ավելի քան 70 անշարժ գույքի վարձակալության պայմանագրեր՝ որպես «փաստացի ծախս» նշելով «0,00» ՀՀ դրամ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք իրականում անհատույց կամ արտոնյալ պայմաններով տրամադրված ծառայություններ են, որոնք ըստ օրենքի պետք է ներառվեին հիմնադրամի ծախսերում՝ իրենց իրական շուկայական արժեքով: Ավելին, այդ նույն պայմանագրերում որպես «շուկայական արժեք»

նշված թվերը էականորեն տարբերվում են իրականությունից, քանի որ համացանցում անշարժ գույքի վարձակալության կայքերում Երևանի և մարզերի գրասենյակային տարածքների վարձակալության ընթացիկ գների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ կուսակցության կողմից նշված գնահատականները արհեստականորեն աղավաղված են՝ ֆինանսական վերահսկողությունից խուսափելու և իրական ծախսերը ստվերելու նպատակով:

3.2. Հանրահավաքների կազմակերչական ծախսեր

Քաղաքացիական պայմանագիր կուսակցության քարոզարշավն աչքի է ընկել Հայաստանի խոշոր քաղաքներում և մայրաքաղաքում ամփոփիչ հանրահավաքներին իրականացված թանկարժեք կահավորանքով և դրոնների շոուներով: Դրոնների շոուներ անցկացվել են Կապանում[4], Գյումրիում[5], Գավառում[6], Վանաձորում[7], Իջևանում[8], Եղեգնաձորում[9], Արտաշատում[10], Աբովյանում[11] և Երևանում[12]:

Նշված դրոններով շոուների շուկայական արժեքը գնահատելու համար նախ պետք է արձանագրել, որ ՔՊ կուսակցության նախընտրական քարոզարշավի նույն սիմվոլներով (ՀՀ քարտեզ, զինանշան, դրոշ և ձեռքերով սրտի նշան) և լոզունգներով (խաղաղություն) դրոն շոու առաջին անգամ իրականացվել է 2026թ. Ամանորի գիշերը, որտեղ կիրառվել են 2000-ից ավել դրոններ[13]: Ըստ բաց աղբյուրներում առկա տեղեկատվության՝ 700–ից 2,000 դրոններով մեկ շոուի արժեքը տատանվում է 100,000 – 250,000 ԱՄՆ դոլարի սահմաններում[14]:

Այսիքն եթե յուրաքանչյուր շոուի շուկայական արժեքի համար հիմք ընդունենք նվազագույնը 100,000 ԱՄՆ դոլար արժեքը, ապա 9 շոու անցկացման համար միայն շոուի արժեքը պետք է լինի ***ավելի քան 330.000.000 (երեք հարյուր երեսուն միլիոն)*** ՀՀ դրամ:

Մինչդեռ ՔՊ-ի կողմից ընհանուր հանրահավաքների կազմակերչական աշխատանքների, ներառյալ՝ տեխնիկայի, դրոն շոուի և շրջիկ պիկապների համար ընդհանուր հայտարարագրել է 214.000.000 (երկու հարյուր տասնչորս միլիոն) ՀՀ դրամ:

Համեմատության համար պետք է նշել նաև, որ «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից, որը թե՛ պետական գնումների ոլորտում թե՛ ՔՊ միջոցառումների կազմակերպման հիմնական մատակարարն է, մեկ առանց դրոնների շոուների միջոցառման կազմակերպումը տատանվում է 30-130 միլիոն դրամի սահմաններում՝ ըստ armeps.am կայքում առկա տեղեկատվության:

Այլ կերպ ասած ՝ չի կարող 9 քաղաքներում անցկացված մեծ հանրահավաքների կազմակերպման ծախսը, ներառյալ ՝ լուսաձայնային տեխնիկան, բեմերի կոստրուկցիաների

---

[4] ՀՀ քարտեզը՝ Կապանի երկնքում. Դրոն շոու՝ ՔՊ հանրահավաքին https://www.facebook.com/watch/?v=931873646336842
[5] Դրոնների շոու Գյումրու երկնքում https://www.youtube.com/watch?v=WrD2kFp-f5M
[6] Դրոնների շոուն Գավառումhttps://www.youtube.com/watch?v=AFS2R9Ugd6k
[7] Դրոնների շքեղ շոուն՝ Վանաձորի երկնքում https://www.youtube.com/watch?v=nuQgxnPNnzo
[8] Դրոն շոու Իջևան https://www.youtube.com/watch?v=5LIPwwCB-jY
[9] Դրոններով շքեղ շոու՝ Վայոց ձորում: https://www.facebook.com/watch/?v=1666989167685144
[10] Դրոններով շոու՝ Արտաշատի երկնքում https://www.facebook.com/watch/?v=1294499522349509
[11] Դրոն շոու՝ Աբովյան քաղաքում https://www.youtube.com/shorts/UhFE2Y0jwnM
[12] Դրոն շոու Երևանի երկնքում https://www.facebook.com/watch/?v=37089059400681254
[13] Ֆասթ Բանկի աջակցությամբ Հանրապետության հրապարակում կայացել է լուսային դրոն շոու «Հրապարակ օրաթերթ» https://hraparak.am/am/post/9db798ff4b50298c40d5e4f8b8ccb974
[14] The Complete Guide to Drone Light Shows https://www.hireuavpro.com/drone-light-shows/guide/

լոգիստիկ և հավաքման ծախսերը, դրոնների շոուն՝ շրջիկ պիկապների հետ միասին արժենալ 214 միլիոն դրամ:

3.3. Անվճար համերգներ

Քարոզարշավի պաշտոնական մեկնարկին նախորդող ժամանակահատվածում ընթացքում արձանագրվել են թաքնված քարոզչության դեպքեր: Ապրիլի 19-ին Գյումրիում և ապրիլի 25-ին Երևանում իրականացված «Խաղաղության ձայնը» խորագրով համերգները, որոնք իմաստային առումով նույնացել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության «Տե՛ր կանգնիր խաղաղությանը» կարգախոսի հետ, փաստացի հանդիսացել են իշխող ուժի քարոզարշավի բաղադրիչ: Այդ փաստը կասկածից վեր է դասվում այն հանգամանքով, որ միջոցառումների ընթացքում ելույթ է ունեցել ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ իր անձնական երաժշտական խմբի՝ «Վարչաբենդ»-ի հետ, ինչը ոչ միայն միջոցառումը վերածել է քաղաքական քարոզչության այլ նաև ընկալվել որպես այդպսիսին:

Միջազգային հայտնի արտիստների[15]՝ ներգրավումը վկայում է այն մասին, որ համերգների իրական ծախսերը հասել են ***մի քանի հարյուր միլիոն դրամի***[16], որոնք, սակայն, չեն արտացոլվել կուսակցության նախընտրական հիմնադրամի հաշվետվությունում: Նշված համերգի ահռելի ծախսերը թաքցվել են մասնավոր կազմակերպության կողմից կատարված լինելու հիմնավորմամբ՝ նույնիսկ այն պարագայում, երբ դրա մասին մամուլի կողմից ուղղակի հարցում է կատարվել ֆինանսավորող բանկին՝ մատնանշելով համերգին ՔՊ կուսակցության վարչապետի թեկնածու Ն. Փաշինյանի ելույթ ունենալու հանգամանքը[17]: Իշխող ուժի կողմից «Fast Bank»-ի միջոցով այս ծախսերի ստվերայնացումը ոչ միայն խախտում է «Կուսակցությունների մասին» օրենքով իրավաբանական անձանցից նվիրատվություն ստանալու արգելքը, այլև խաթարում է ընտրությունների ազատ և հավասար լինելու սահմանադրական սկզբունքը, քանի որ ընդդիմադիր ուժերը հայտնվել են մրցակցային անհավասար պայմաններում՝ չունենալով նմանօրինակ անօրինական ֆինանսավորման և վարչական ռեսուրսի հասանելիություն: Այս առնչությամբ իր մտահոգությունն է հայտնել Ընտրությունների Միջազգային դիտորդական առաքելությունը՝ իր եզրակացությունում նշելով. «*Թեև իրավաբանական անձանց, օտարերկրյա և անանուն աղբյուրներից կատարվող նվիրատվություններն արգելված են, իշխող կուսակցության քաղաքականությունը խթանող մի շարք թանկարժեք միջոցառումներ բացահայտորեն հովանավորվել են խոշոր ընկերությունների կողմից, ինչը մտահոգություններ է առաջացրել սերտաճված բիզնես և քաղաքական շահերի կապակցությամբ*»:

3.4. Չնախատեսված զորահանդես

2026թ. մայիսի 28-ին Երևանում անցկացված պետական զորահանդեսը քարոզարշավի փուլում օգտագործվել է իշխող կուսակցության քաղաքական օրակարգը սպասարկելու համար: Այս

---

[15] Outlandish-ի, In-Grid-ի, Willie William-ի և Imany-ի

[16] օրինակ միայն Willie Wiliam-ի ելույթը գնահատվում է- 150,000$-299,000$ https://www.celebritytalent.net/sampletalent/12677/willy-william/

[17] Բաղալյանները վճարում են, «Վարչաբենդը»՝ նվագում. հրն է խնդիրը https://www.azatutyun.am/a/vivaro-i-sepakanatereri-banki-finansavormamb-varchabendi-hamergneri-shark-gyoumriits-erevan/33741065.html

մասին են վկայում Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավի ընթացքում արված հետևյալ հայտարարությունները.

1. 2026թ. մայիսի 20-ին Սանահինում հայտնել է. «Համոզված եմ՝ զորահանդեսը տեսնելուց հետո ժողովուրդը ուզենալու է քեֆ անի[18]»

2. 2026թ. մայիսի 26-ին Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղում հայտնել է, որ իշխանություններն ի սկզբանե չէին պլանավորել շքերթ անցկացնել, սակայն որոշում են կայացրել այն կազմակերպել՝ ի պատասխան իրենց քաղաքական ընդդիմախոսների պնդումների, թե «իրենք քանդել են բանակը»[19]:

3. 2026թ. մայիսի 29-ին Արծվաբերդում հայտնել է. «Զորահանդեսից ինչ տպավորություն ստացաք. բայց դուք հիշեք նախորդող հինգ տարիներին ինչ էր ասում ընդդիմությունը մեր մասին: Ասում էր՝ բանակը քանդում ենք, բանակը թուլացնում ենք, բանակը քայքայում ենք: Հիմա ես ձեզ շնորհավորում եմ ՀՀ նոր բանակ ունենալու առթիվ[20]»:

Զորահանդեսի կազմակերպման ծախսերը իրականացվել են ՀՀ պաշտպանության նախարարության միջոցներից, որի համար նույն **«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ից ՀՀ ՊՆ-ՀՄԱԾՁԲ-26-12/1 ծածկագրով կատարվել է «Հրատապ մեկ անձից գնում» 419,638,800.00 (չորս հարյուր տասնինը միլիոն վեց հարյուր երեսունութ հազար) դրամի չափով:**

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ զորահանդեսի կազմակերպչական աշխատանքների համար ներառված չի եղել թանկարժեք կահավորում կամ տեխնիկա. չի կազմակերպվել համերգ, հետևաբար չի եղել համերգային բեմահարթակ, արտիսներ, արտաքին ներգրավման նվագախումբ, կամ դրոն շոու: Արտաքին կազմակերպումը սահմանափակված էր միայն կառավարական ներկայացուցիչների հարթակի կահավորանքով և Հանրապետության հրապարակի գծանշումներով: Նմանատիպ միջոցառման արտաքին կազմակերպչական ծախսերը առերևույթ չէին կարող գերազանցել 30 միլիոն դրամը:

Ուստի, զորահանդեսի միջոցառման կազմակերպչական ծախսերի մեծությունը կարելի է բացատրել հետևյալ կերպ. Քաղաքացիական պայմանագիր կուսակցության կողմից 9 քաղաքներում «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից իրականացված 330 միլիոն դրամ շուկայական արժեքով դրոնների շոուի դիմաց իրականում փոխհատուցվել է պետական բյուջեից՝ զորահանդեսի հրատապ մեկ անձից գնման շրջանակներում:

Փաշինյանի հայտարարությունը զորահանդես չպլանավորելու մասին և հրատապ մեկ անձից գնում կատարելը վկայում են, որ զորահանդեսի անցկացման մասին որոշումը եղել է ո՛չ թե պետական անվտանգային անհրաժեշտություն, ո՛չ էլ նախապես պլանավորված միջոցառում, իսկ զորահանդեցի որոշումից հետո դրա մասին անընդհատ հիշատակումները քարոզարշավի իր ելույթներում ցույց են տալիս, որ զորահանդեսը եղել է նախընտրական քարոզչության մաս, որի

---

[18] *«Համոզված եմ՝ զորահանդեսը տեսնելուց հետո ժողովուրդը ուզենալու է քեֆ անի. Փաշինյան», civic.am https://www.facebook.com/watch/?v=1645285033248845*

[19] *«Էնքան բամբասեցին, որ բանակը քանդել ենք, զորահանդես ենք անում. Փաշինյան». news.am. 2026 թ. մայիսի 26. https://news.am/hy/video/1038388*

[20] *«Զորահանդեսից ինչ տպավորություն ստացաք. Ի պատասխան Փաշինյանի հարցին՝ արծվաբերդցիները բուռն ծափահարեցին», civic.am,* https://www.facebook.com/watch/?v=861020653109010

ծախսերը կատարվել են պետական բյուջեից: Սա վկայում է, որ իշխող կուսակցությունը պետական միջոցները և պետական մարմինների գործունեությունը դիտարկել է որպես իր նախընտրական շտաբի գործիքակազմի անբաժանելի մաս՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված հավասար և ազատ ընտրությունների սկզբունքը:

Պետական միջոցառման՝ որպես քաղաքական բանավեճի գործիք օգտագործումը ուղղակիորեն հակասում է Վենետիկի հանձնաժողովի ուղեցույցներին, ըստ որոնց՝ իշխանությունները պետք է խուսափեն քարոզարշավի ընթացքում այնպիսի միջոցառումներից, որոնք նպատակ ունեն ստեղծելու դրական ընկալում իշխող կուսակցության նկատմամբ:

«Ընտրական գործընթացների ժամանակ վարչական ռեսուրսների չարաշահումը կանխարգելելու և դրան արձագանքելու վերաբերյալ» ուղեցույցը սահմանում է, որ օրենսդրությունը պետք է նախատեսի արդյունավետ մեխանիզմներ՝ ***արգելելու համար հանրային իշխանություններին իրենց դիրքից անարդար առավելություն քաղել՝ նախընտրական քարոզչության նպատակով պաշտոնական հանրային միջոցառումներ անցկացնելու միջոցով, ներառյալ բարեգործական միջոցառումները կամ այնպիսի միջոցառումները, որոնք գործում են ի նպաստ կամ ի վնաս որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի:*** Ավելի որոշակի՝ խոսքը վերաբերում է այնպիսի միջոցառումներին, որոնք ենթադրում են ինչպես որոշակի դրամական միջոցների (պետական կամ տեղական բյուջե), այնպես էլ ինստիտուցիոնալ ռեսուրսների (աշխատակազմ, տրանսպորտային միջոցներ, ենթակառուցվածքներ, հեռախոսներ, համակարգիչներ և այլն) օգտագործում:

Ուղեցույցը ճանաչելով, որ Կառավարության բնականոն աշխատանքը պետք է շարունակվի ընտրական ժամանակահատվածում, այնուամենայնիվ ընդգծում է ընտրական մրցակցության ընթացքում հավասար պայմանների խաթարման նպատակով վարչական ռեսուրսների չարաշահումը կանխարգելելու համար օրենսդրությունը պետք է սահմանի, որ քարոզարշավների ընթացքում ***չպետք է արվեն որևէ կոնկրետ կուսակցության կամ թեկնածուի նկատմամբ բարենպաստ ընկալում ստեղծելուն առնչվող կամ դրան ուղղված խոշոր հայտարարություններ:*** Սա չի ներառում այն հայտարարությունները, որոնք անհրաժեշտ են չնախատեսված հանգամանքների բերումով, ինչպիսիք են երկրում և/կամ տարածաշրջանում տնտեսական և/կամ քաղաքական զարգացումները, օրինակ՝ տարերային աղետներից կամ ցանկացած բնույթի արտակարգ իրավիճակներից հետո, որոնք պահանջում են անհապաղ ու հրատապ և հետաձգում չհանդուրժող գործողություններ:

Բացի այդ Ուղեցույց 5-րդ թափանցիկության սկզբունքից բխում է որ

*5.1. «Իրավական դաշտը պետք է ապահովի ընտրական գործընթացներում քաղաքական կուսակցությունների և թեկնածուների կողմից պետական միջոցների ու հանրային բարիքների օգտագործման **թափանցիկությունն ու հաշվետվողականությունը**»:*

5.2. «Պետք է հստակ տարանջատում լինի կառավարության գործունեության, քաղաքացիական ծառայության գործունեության և նախընտրական քարոզարշավի միջև»:

5.3. «Իրավական դաշտը պետք է ապահովի ընտրողներին և քաղաքական մրցակիցներին վստահելի, բազմազան և օբյեկտիվ տեղեկատվության հասանելիությունը պետական մարմինների (ինչպես նաև պետության կողմից վերահսկվող կազմակերպությունների) կողմից ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, ***որ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական քարոզարշավի համար կատարված փաստացի ծախսերը, վարչական ռեսուրսի չարաշահման և թափանցիկության բացակայության պայմաններում, առերևույթ առնվազն հիսուն տոկոսի չափով գերազանցել է օրենքով թույլատրված 800 միլիոն դրամի շեմը, որից մի մասը ՝ զորահանդեսի ֆինանսավորումը իրականացվել է պետական բյուջեից.***

Դիմումում ներկայացված փաստական տվյալների, հաշվարկների և ապացույցների համադրությունից հետևում է, որ իշխող քաղաքական ուժի նախընտրական քարոզչության համար կատարված փաստացի ծախսերը էապես գերազանցել են Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն թույլատրելի չափը:

Ընտրական օրենսգիրքը նման դեպքերի համար նախատեսում է հստակ և աստիճանական իրավական հետևանքներ: Մասնավորապես, եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ արձանագրվում է նախընտրական քարոզչության համար թույլատրելի ծախսերի առավելագույն չափի գերազանցում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է հարուցել վարչական վարույթ: Օրենսդիրը նաև նախատեսել է, որ եթե ծախսված գումարի, կիրառման ենթակա տուգանքի և նախընտրական հիմնադրամի առավելագույն թույլատրելի ***չափի տարբերությունը գերազանցում է հիմնադրամի առավելագույն չափի 20 տոկոսը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է դիմել դատարան՝ ընտրություններին մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով:***

Դիմողի կողմից կատարված ուսումնասիրությունը և ներկայացված ապացույցները վկայում են, որ տվյալ դեպքում առկա է ոչ թե աննշան կամ տեխնիկական բնույթի շեղում, այլ այնպիսի ծավալի գերազանցում, որը, պատշաճ վարչարարության և օրենքի պահանջների հետևողական կիրառման պայմաններում, կարող էր հանգեցնել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի ընտրական ցուցակի գրանցման ուժը կորցրած ճանաչման հարցի առաջադրմանը:

Սակայն իրավասու մարմինների կողմից չի իրականացվել ներկայացված տեղեկությունների լիարժեք, արդյունավետ և անաչառ քննություն, ինչի հետևանքով չեն կիրառվել այն իրավական մեխանիզմները, որոնք օրենսդիրը նախատեսել է ընտրական մրցակցության հավասար պայմանների պահպանման և ընտրական գործընթացի ֆինանսական թափանցիկության ապահովման նպատակով:

Հետևաբար, տվյալ դեպքում խնդիրը չի սահմանափակվում միայն նախընտրական ֆինանսավորման կանոնների հնարավոր խախտմամբ: Խնդիրը կայանում է նաև նրանում, որ ընտրական գործընթացի ընթացքում չեն գործադրվել այն իրավական հետևանքները, որոնք օրենքը

նախատեսել է հենց նման խախտումների համար: Արդյունքում ընտրություններին մասնակցությունը շարունակել է քաղաքական ուժ, որի նկատմամբ, ներկայացված փաստերի հիմնավորվածության դեպքում, կարող էր առաջանալ ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հարցը:

Այս հանգամանքը, իր հերթին, էական նշանակություն ունի ընտրությունների արդյունքների սահմանադրականության գնահատման տեսանկյունից, քանի որ վերաբերում է ոչ միայն քարոզչության ֆինանսավորման կանոնների պահպանմանը, այլև ընտրական գործընթացին մասնակցող սուբյեկտների իրավական կարգավիճակի օրինականությանը:

4. Պետական մարմինների և ՏԻՄ ծառայողների, ինչպես նաև կրթական հաստատություններում դասավանդողների և սովորողների ներգրավումը քարոզչությանը, ԿԸՀ և իրավապահ համակարգի անգործությունը

Նախընտրական քարոզարշավի ժամանակ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության քարոզչության բազմամարդությունը ապահովելու համար հատկապես մարզային այցերին և հանրահավաքներին ներգրավվում են պետական մարմինների և համայնքային մարմինների ծառայողներ, ինչպես նաև համայքային և պետական ենթակայության կրթական հաստատություններում դասավանդողներ և սովորողներ, ներառյալ՝ անչափահասներ: Ներգրավումը եղել է, ինչպես աշխատանքային օրվա ավարտից հետո, այնպես էլ աշխատանքային ժամերին:

Մամուլում առկա են եղել հրապարակումներ, որտեղ ուսուցիչները խոստովանել են, որ «դասերը կրճատել են՝ հանուն Ն. Փաշինյանի քարոզարշավին ներկա գտնվելու»[21]: Վերին Արտաշատում երաժշտական դպրոցի աշակերտներին ՔՊ քարոզչական հանդերձանքով ուղղորդել են դիմավորելու ՔՊ թեկնածուներին «Տասնվեց» վանկարկումներով[22]:

Համայքային ծառայողներին քարոզչությանը ներգրավելու դեպքեր արձանագրվել են նաև «Հայաստան» դաշինքի կողմից մշտադիտարկման արդյունքներով: Մասնավորապես Արթիկ համայնքում արդյունքում հաջողվել է նույնականացնել և ամփոփ զեկույցում վավերագրել վարչական ռեսուրսի կիրառման կոնկրետ դեպք, որը տեղի է ունեցել ենթադրաբար 2026 թ. մայիսի 13-ին կամ 14-ին: Տվյալ կոնկրետ դեպքի իսկությունը հավաստվել է սոցիալական ցանցում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի տարածքային՝ «Շիրակ, տե՛ր կանգնիր խաղաղությանը» էջում 2026 թ. մայիսի 14-ին հրապարակված քարոզարշավի լուսանկարների և Արթիկ համայնքի պաշտոնական կայքում տեղադրված՝ աշխատակազմի

---

[21] Հանուն Փաշինյանի դասերը կրճատեցինք. Բերքառատի դպրոցի ուսուցիչներին Գազելով բերեցին ՔՊ-ի քարոզարշավին https://news.am/hy/video/1035001
«Նորմմ է, որ դասի ժամին ուսուցիչները եկել են քարոզարշավի». Փաշինյանը հարցն անպատասխան թողեց https://www.aravot.am/2026/05/13/1556580/

[22] Ինչպես են երեխաների հրահանգում բղավել 16. կադրեր Փաշինյանի՝ Վերին Արտաշատ այցից առաջ https://www.facebook.com/watch/?v=1928090634636964

տվյալների համադրված ուսումնասիրությամբ, որով նույնականացվել է Արթիկ համայնքի և ենթակա հիմնարկների **առնվազն 24 աշխատակից**:

Դեպքի առնչությամբ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե՝ քննելու արդյոք վարչական ռեսուրսի օգտագործում է զուգորդվում է այլ հանցանքներով, ինչպես օրինակ ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածը (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը), 211-րդ հոդվածը (Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը) և 236–րդ հոդվածը (Հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը): Նշված հաղորդմանը ի պատասխան ստացվել է Հակակոռուպցիոն **կոմիտեի վարույթ չնախաձեռնելու մասին գրությունը**, այն պատճառաբանությամբ որ հանրային ծառայողների ներկայությունը դեռևս չի վկայում հարկադրանքի տարրի մասին:

Արթիկում վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ նաև դիմում էր ներկայացվել ԿԸՀ՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ վարչական ռեսուրսի օգտագործման դեպքով իրականացնել օբյեկտիվ և բազմակողմանի վարչական քննություն, ՎԻՎՕ 40.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով վարչական պատասխանատվության (տուգանքի) ենթարկել Արթիկ համայնքի վարչական ռեսուրսը ապօրինի կիրառած և քարոզչությանը ներգրավված պաշտոնատար անձանց: **Մինչդեռ ԿԸՀ -ն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և Ընտրական օրենսգրքով ուղղակիորեն իրեն վերապահված լիազորությունները <u>իրականացնելու փոխարեն նշված դիմումը՝ կից փաստաթղթերով վերահասցեագրել է Գլխավոր դատախազություն:</u>**

Նույն կերպ, փաստագրվել և ԿԸՀ է ներկայացվել Մարտունի համայքնում: Մասնավորապես «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի էջում 2026 թ. մայիսի 27-ին հրապարակված լուսանկարների, Մարտունի համայնքի պաշտոնական կայքում տեղադրված՝ աշխատակազմի տվյալների, ինչպես նաև բաց աղբյուրներում առկա այլ տեղեկատվության համադրված ուսումնասիրությամբ նույնականացվել է համայնքային ծառայող հանդիսացող 12 անձ, որոնք աշխատանքային ժամի ներգրավված են եղել քարոզչական հանդիպումներին: <u>Դեպքի վերաբերյալ ԿԸՀ ուղղված նույնաբովանդակ դիմում, որին պատասխան ԿԸՀ-ն կրկին հայտնել է, որ վերահասցեագրել է դիմումը Գլխավոր դատախազություն:</u>

Համադրելով արձանագրված փաստերը միջազգային չափանիշների հետ՝ ակնառու է դառնում Հայաստանի Հանրապետության իրավական կարգավորումների և դրանց կիրառման պրակտիկայի ճգնաժամը: Հայաստանում հանրային և քաղաքացիական ծառայողների ներգրավվածությունը նախընտրական քարոզչությանը օրենսդրական մակարդակով բավարար հստակությամբ և կանխատեսելիությամբ կանոնակարգված չէ: Ներպետական օրենսդրությունը կամ առնվազն դրա կիրառության բացակայությունը չի ձևավորում այն հստակ սահմանը, թե

հանրային ծառայողը որ պահից է հանդես գալիս «անձնական» կարգավիճակով, ինչը հնարավորություն է տալիս իրավասու մարմնին (ԿԸՀ) և իրավապահ համակարգին ակնհայտ խախտումների պարագայում հրաժարվել վարչական քննությունից կամ քրեական վարույթի նախաձեռնումից:

Ուղեցույցը սահմանում է, որ ներպետական կարգավորումներով պետք է սահմանվի, թե որ գործողություններն են համարվում քարոզչական և, հետևաբար, արգելված քաղաքացիական ծառայողների համար իրենց պաշտոնական հանգամանքով գործելիս, և իրավասու մարմինը պետք է ունենա խորհրդատվական դեր ընտրական ժամանակահատվածում ներկայացված այն հարցումների առնչությամբ, թե արդյոք որևէ գործողություն ընկնում է քաղաքացիական ծառայության կողմից քարոզչական գործունեության արգելքի տակ:

Պրակտիկայում ձևավորված այս անպատժելիությունը ստեղծում է մի իրավիճակ, երբ քաղծառայողը կամ համայնքային աշխատակիցը ոչ թե զսպված է օրենքի ուժով, այլ ընդհակառակը՝ ուղղակիորեն խրախուսված է կատարել իշխանական քարոզչություն: Նա հստակ գիտակցում է, որ աշխատանքային ժամերին իշխող քաղաքական ուժի հանրահավաքներին ներկայանալը և էլեկտորալ զանգված ձևավորելը չի հանգեցնելու որևէ իրավական հետևանքի: Սա հանգեցնում է պետական ապարատի և իշխող կուսակցության բացահայտ ձուլմանը:

«Ընտրական գործընթացների ժամանակ վարչական ռեսուրսների չարաշահումը կանխարգելելու և դրան արձագանքելու վերաբերյալ» համատեղ ուղեցույցի 4.1. և 4.2. կետերը սահմանում են, որ

«4.1. Իրավական դաշտը պետք է ապահովի քաղաքացիական ծառայության չեզոքությունը՝ արգելելով <u>քաղաքացիական ծառայողներին իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնելիս մասնակցել նախընտրական քարոզչության՝ լինեն դրանք թեկնածուներ, թե աջակցեն այլ թեկնածուների</u>: Սա տարածվում է նաև հանրային և կիսահանրային կազմակերպությունների վրա: Կարևոր է պահպանել պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տարանջատում. մասնավորապես՝ քաղաքական կուսակցությունները չպետք է ձուլվեն պետական ապարատի (պետության) հետ:

4.2. Ընտրական գործընթացների ընթացքում քաղաքացիական ծառայության չեզոքությունն ապահովելու և շահերի բախման ռիսկերից խուսափելու նպատակով, օրենսդրությունը պետք է ապահովի հստակ տարանջատում քաղաքականապես զգայուն պետական պաշտոնների (հատկապես՝ ավագ ղեկավար կազմի) և թեկնածու առաջադրվելու միջև: Այս առումով իրավական դաշտը պետք է նախատեսի համապատասխան և համաչափ կանոնների շրջանակ: Նման կանոնները կարող են ներառել հստակ հրահանգներ այն մասին, թե ինչպես և երբ կարող է իրականացվել քարոզչություն անձնական կարգավիճակով, կամ ընտրություններում առաջադրվող պետական որոշ պաշտոնյաների համար՝ պաշտոնից ժամանակավորապես ազատում (կասեցում) կամ հրաժարական»:

Առհասարակ ԿԸՀ կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակ վարչական ռեսուրսի կիրառման համար որևէ պաշտոնատար անձի նկատմամբ որևէ վարույթ չի հարուցվել և որևէ պատասխանատվության

միջոց չի կիրառվել: Սա ակնառու ցուցանիշ է այն բանի, թե իշխանությունները ինչպիսի լայն թողտվություն են վայելել վարչական ռեսուրս կիրառելու հարցում:

Պատահական չէ Ուղեցույցի այն ընդգծումը, որ Օրենսդրությունը ոչ միայն պետք է նախատեսի ընտրական գործընթացների ժամանակ **վարչական ռեսուրսների չարաշահման ընդհանուր հստակ և կանխատեսելի արգելք**, այլև այդպիսի արգելքները պետք **կիրառվեն**, պատժամիջոցները պետք է լինեն **կիրարկելի, համաչափ և զսպող**, իսկ Վենետիկի հանձնաժողովի 2002թ. «Պատշաճ ընտրական գործընթացի կանոնակարգի» 3-րդ կետի c) ենթակետի համաձայն՝ պետական չեզոքության պարտականության և ընտրողների՝ կարծիք ձևավորելու ազատության խախտման դեպքերում պետք է կիրառվեն **պատժամիջոցներ:**

5. Կողմնակալ լուսաբանում հանրային տեսալսողական մեդիայում և ՀՌՀ ոչ պատշաճ արձագանքը.

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով երաշխավորված հավասար ընտրական իրավունքի և ընտրողների՝ ազատ կարծիք ձևավորելու սկզբունքների էական խախտման մասին է վկայում հանրային միջոցներից ֆինանսավորվող մեդիա-ռեսուրսի միակողմանի ուղղորդումը հօգուտ իշխող քաղաքական ուժի:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ հանրային հեռարձակողները պարտավոր են ընտրություններին մասնակցող ուժերի համար ապահովել անկողմնակալ, հավասարակշռված, գնահատականներից զերծ և ոչ խտրական պայմաններ, իսկ քարոզչության հետ չկապված հրապարակումներում լինել առավելագույնս չեզոք:

Մեդիալուսաբանման տևողության միջին վիճակագրական անհամամասնությունը «Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից իրականացված մշտադիտարկման փաստացի տվյալների համակարգային վերլուծությունը ցույց է տվել, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի **«Լուրեր» լրատվական** հաղորդաշարի եթերում առկա է տևողության ակնհայտ անհամաչափություն: Մոնիտորինգի ենթարկված ժամանակահատվածի միջին վիճակագրական տվյալների համաձայն՝ իշխող «***Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը հատկացված եթերաժամանակը ավելի քան երեք անգամ գերազանցել է ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի տրամադրված ժամանակին***: Այսպես, եթե ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի լուսաբանումը առանձին օրերին տատանվել է ընդամենը 3-6 րոպեի սահմաններում կամ ընդհանրապես հավասար է եղել զրոյի (իսպառ արտամղվելով եթերից), ապա իշխող ուժի քարոզարշավին և դրա առաջնորդի ելույթներին կայուն կերպով հատկացվել է օրական 7-ից մինչև 11 րոպե ազատ եթերաժամանակ:

Բացի այդ, «Լուրեր» լրատվականի պաշտոնական Telegram (Տելեգրամ) հարթակում արտատպվել են բացառապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավը լուսաբանող ռեպորտաժներն ու նյութերը: «Հայաստան» դաշինքի վերաբերյալ որևէ անդրադարձ նշված պետականորեն կառավարվող թվային հարթակում չի տեղադրվել:

Սույն ընտրական գործընթացում արձանագրված մեդիա-դիսբալանսի հիմնական պատճառներից է այն արատավոր իրողությունը, որ տարիներ ի վեր ***Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ), ընտրությունների վերաբերյալ մոնիթորինգ իրականացնելիս, չի կատարում լուրերի լուսաբանման որակական ուսումնասիրություն:*** Կարգավորող մարմինը սահմանափակվում է բացառապես մեխանիկական, քանակական բոպեների ու վայրկյանների հաշվարկով՝ ամբողջությամբ անտեսելով բովանդակային կողմը: Մասնավորապես, ՀՌՀ-ն տվյալ կերպով ուշադրություն չի դարձնում հատկապես լուրերի թողարկումներում, ներառյալ՝ ամենամեծ լսարանն ապահովող փրայմ թայմում (Prime Time), թե որքանով է ապահովվում բոլոր ուժերի համաչափ, հավասարակշռված և չեզոք լուսաբանումը: Այս մեխանիկական մոտեցումը հնարավորություն է տալիս հեռարձակողներին ձևականորեն «լրացնել» ընդդիմության ժամանակը ոչ պիկ ժամերին (գիշերային կամ ցերեկային թողարկումներում), մինչդեռ իրական քաղաքական ազդեցություն ունեցող երեկոյան լրատվական եթերը ավելի շուտ ծառայեցվում է իշխող ուժի քաղաքական գովազդին ու չեզոքության սկզբունքի խախտմանը:

Թեև արձանագրված խախտումների առնչությամբ բողոք է հասցեագրվել ՀՌՀ-ին՝ պահանջելով հարուցել վարչական վարույթ, կարգավորող մարմնի որդեգրած ձևական մոտեցումն ու անգործությունը էապես չեն փոխել իրավիճակը:

Հանրային լրատվամիջոցների չեզոքության սկզբունքը, ըստ Ուղեցույցի, պահանջում է, որպեսզի իրավական դաշտը ապահովի ընտրությունների հետ կապված իրադարձությունների ***օբյեկտիվ, անաչառ և հավասարակշռված լուսաբանումը*** պետական սեփականություն հանդիսացող լրատվամիջոցների կողմից: ***Օրենքը և պրակտիկան պետք է երաշխավորեն, որ պետական լրատվամիջոցները չեն ներգրավվում «թաքնված» քարոզարշավի մեջ՝ հօգուտ կամ ընդդեմ որևէ քաղաքական մրցակցի»*** (Ուղեցույց 4.4. կետ):

Հավասար հնարավորությունների սկզբունքն իր հերթին ենթադրում է հավասար հասանելիություն ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսներին, քաղաքական կուսակցությունների և քարոզարշավների պետական ֆինանսավորմանը, ***ինչպես նաև պետական լրատվամիջոցներին՝*** բոլոր քաղաքական կուսակցությունների և թեկնածուների համար: Սա վերաբերում է նաև քարոզչության համար օգտագործվող հանրային շենքերին և կառույցներին»: (Ուղեցույց 6.2. կետ):

Հանրային հեռուստատեսության ակնհայտ կողմնակալ լուսաբանման մասին արձանագրվել է նաև Միջազգային դիտորդների եզրակացությունում՝ նշելով, որ Հանրային հեռուստաընկերությունը «ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության, ինչը հակասում է նրա իրավական պարտավորություններին և հանրային առաքելությանը»:

6. Ընտրական հանձնաժողովների անդամների կողմից քարոզչության իրականացում և ԿԸՀ անգործությունը

Քվեարկության օրվանից երկու օր առաջ դիմողը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել դիմում, որ տարբեր ընտրական հանձնաժողովների անդամներ, որոնք առաջադրված են եղել իշխող քաղաքական ուժի կողմից, մասնակցել են նախընտրական քարոզչությանը՝ հրապարակայնորեն արտահայտելով աջակցություն տվյալ քաղաքական ուժին և ներգրավվելով քարոզչական գործունեության մեջ: Դիմումին կցվել են հանձնաժողովականների անվանացանկը և քարոզչական գործունեությունը ապացուցող նկարներ, որոնք տարածվել էին մեդիա հարթակներում:

Դիմումով պահանջվել է քննարկել նշված հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը, քանի որ ընտրական հանձնաժողովի անդամի քաղաքական չեզոքությունը և անկողմնակալությունը հանդիսանում են ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության կարևորագույն երաշխիքներից, իսկ նախընտրական քարոզչությանը մասնակցող անձը չի կարող դիտարկվել որպես լիովին անաչառ ընտրական վարչարարություն իրականացնող սուբյեկտ:

Չնայած ներկայացված տեղեկություններին և կից ապացույցներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի ձեռնարկել անհապաղ միջոցներ ներկայացված փաստերի ստուգման և իրավական գնահատման ուղղությամբ: Փոխարենը, ԿԸՀ-ն հայտնել է, որ հարցին կանդրադառնա միայն քվեարկությունից հետո՝ պատճառաբանելով, որ ընտրություններից առաջ համապատասխան անդամների լիազորությունների դադարեցումը կարող է խոչընդոտել ընտրական հանձնաժողովների աշխատանքը:

Այս դիրքորոշման հետևանքով այն անձինք, որոնց նկատմամբ առկա էին ընտրական օրենսդրության խախտման վերաբերյալ հիմնավոր պնդումներ, շարունակել են իրականացնել ընտրական վարչարարություն, մասնակցել քվեարկության կազմակերպմանն ու արդյունքների ամփոփմանը: Այսպիսով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, տեղեկացված լինելով հնարավոր խախտումների մասին և ունենալով իրավիճակին միջամտելու լիազորություններ, փաստացի հրաժարվել է ընտրական գործընթացի ընթացքում ապահովել ներկայացված խախտումների արդյունավետ և ժամանակին քննությունը:

Հատկանշական է, որ ԿԸՀ-ի ներկայացրած հիմնավորումը փաստացի հանգեցնում է այն իրավիճակին, երբ ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ընտրական օրենսդրության հնարավոր խախտումը չի կարող որևէ իրավական հետևանք առաջացնել հենց ընտրական գործընթացի ընթացքում, այսինքն՝ այն ժամանակ, երբ նման հետևանքն առավել անհրաժեշտ է ընտրությունների օրինականությունն ու անկողմնակալությունը երաշխավորելու համար: Նման մոտեցումը զրկում է ընտրական վերահսկողության մեխանիզմները դրանց կանխարգելիչ նշանակությունից և չի ապահովում ընտրական իրավախախտումների արդյունավետ կանխումը:

Այսպիսով, խնդիրը սահմանափակված չէ առանձին հանձնաժողովների անդամների հնարավոր իրավախախտ վարքագծով: Տվյալ դեպքում առկա է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործությունը, որի հետևանքով չեն գործադրվել ընտրական գործընթացի օրինականությունը, անկողմնակալությունը և հանրային վստահությունը պահպանելուն ուղղված

վերահսկողական լիազորությունները: Նման պայմաններում ընտրական վարչարարության նկատմամբ հանրային վստահությունը էապես խաթարվել է, իսկ ընտրական գործընթացի մասնակիցների հավասարության սկզբունքը՝ վտանգվել:

ԿԸ հանձնաժողովին ներկայացված դիմումը, հիմնավորող նյութերը և պատասխանը կցվում են սույն դիմումին:

Բ. Ընտրությունների հաշվարկային անճշտություններ

7. Անճշտություններ տեղամասերում ընտրողների ստորագրված ցուցակներում

Դիմողի կողմից կազմակերպվել է ընտրողների ցուցակների և տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից վարվող մասնակցության մատյանների ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով ստուգել պաշտոնապես արձանագրված ընտրողների մասնակցության տվյալների համապատասխանությունը ընտրողների կողմից կատարված ստորագրություններին:

Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են շուրջ 340 ընտրական տեղամասերի փաստաթղթեր, ինչը կազմում է հանրապետության 2005 ընտրական տեղամասերի զգալի մասը: Արդյունքում արձանագրվել է, որ պաշտոնապես ընտրությանը մասնակցած համարված ընտրողների թվի և մասնակցության մատյաններում փաստացի առկա ստորագրությունների թվի միջև գոյություն ունի էական տարբերություն:

Մասնավորապես, ուսումնասիրված տեղամասերում հայտնաբերվել է <u>ավելի քան 27,000 դեպք</u>, երբ ընտրողների մասնակցությունը հաշվառվել է, սակայն համապատասխան ստորագրությունը մասնակցության մատյանում բացակայում է: Այլ կերպ ասած, պաշտոնական տվյալներով ընտրությանը մասնակցած համարված անձանց թիվը շուրջ 27,000-ով գերազանցում է մատյաններում առկա փաստացի ստորագրությունների թիվը:

Նշված անհամապատասխանությունը չի կարող գնահատվել որպես տեխնիկական կամ պատահական բնույթի վրիպում: Խոսքը վերաբերում է հազարավոր դեպքերի, որոնք արձանագրվել են տարբեր ընտրական տեղամասերում և ունեն համակարգային բնույթ: Ընդ որում, այդ արդյունքը ստացվել է ոչ թե բոլոր տեղամասերի, այլ դրանց միայն մի մասի ուսումնասիրության արդյունքում, ինչը լրացուցիչ հիմք է տալիս կասկածի տակ դնելու ընտրողների մասնակցության վերաբերյալ պաշտոնական տվյալների ամբողջական և հավաստի լինելը:

Ընտրողի կողմից մասնակցության մատյանում ստորագրություն կատարելը հանդիսանում է ընտրությանը նրա մասնակցության փաստը հավաստող հիմնական ընթացակարգային երաշխիքներից մեկը: Հետևաբար, մասնակցության վերաբերյալ պաշտոնական տվյալների և մատյաններում առկա ստորագրությունների թվի միջև նման ծավալի տարբերությունը վկայում է, որ ընտրողների մասնակցության պաշտոնական հաշվառման գործընթացում առկա են եղել լուրջ խախտումներ, որոնց բնույթն ու ծավալը ենթակա են մանրակրկիտ դատական գնահատման:

Նման պայմաններում ընտրողների մասնակցության պաշտոնական ցուցանիշները չեն կարող համարվել անվերապահորեն արժանահավատ, իսկ արձանագրված

անհամապատասխանությունների ծավալը ինքնին բավարար հիմք է ընտրությունների արդյունքների հավաստիության վերաբերյալ հիմնավոր կասկածներ առաջացնելու համար:

Հարկ է նաև նշել, որ ներկայացված անհամապատասխանությունները չեն արտացոլում խնդրի ամբողջ ծավալը: Ընտրողների մասնակցության վերաբերյալ ամբողջական ստուգում իրականացնելը փաստացի անհնար է դարձել այն պատճառով, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատշաճ կերպով չի հրապարակել ընտրողների ստորագրված ցուցակների մի մասը: Արդյունքում դիմողը զրկված է եղել բոլոր ընտրական տեղամասերի վերաբերյալ համապարփակ համեմատական ուսումնասիրություն իրականացնելու հնարավորությունից:

Այս հանգամանքը ոչ միայն խոչընդոտել է ընտրությունների արդյունքների նկատմամբ արդյունավետ հանրային և մասնագիտական վերահսկողության իրականացմանը, այլև էապես սահմանափակել է ընտրական գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով նախատեսված իրավական երաշխիքների գործադրումը:

Տեղամասերի ստուգված ստորագրությունների ցուցակների և համեմատական արձանագրությունների օրինակները կցվում են սույն դիմումին՝ որպես ապացույց:

Ամփոփում

Սույն դիմումում ներկայացված փաստերը և ապացույցները վկայում են ոչ թե ընտրական գործընթացում տեղ գտած առանձին կամ պատահական բնույթի խախտումների, այլ ընտրությունների ողջ ընթացքում դրսևորված համակարգային խնդիրների մասին, որոնք էական ազդեցություն են ունեցել ընտրական գործընթացի ազատության, հավասարության, մրցակցայնության, թափանցիկության և արդյունքների արժանահավատության վրա:

Դիմումում ներկայացվել են վարչական ռեսուրսի բազմաբնույթ և համատարած չարաշահման դեպքեր, այդ թվում՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավապահ համակարգի, հանրային տեսալսողական մեդիայի, կրթական հաստատությունների և ընտրական վարչարարության մեջ ներգրավված անձանց կողմից քաղաքական չեզոքության պահանջի խախտումները: Միաժամանակ ներկայացվել են տվյալներ ընտրական հիմնադրամից դուրս կատարված ծախսերի, կասկածելի ֆինանսական գործարքների և կորպորատիվ հովանավորչության վերաբերյալ, որոնք էապես խաթարել են ընտրական մրցակցության հավասար պայմանները:

Առանձնահատուկ մտահոգիչ է այն հանգամանքը, որ բազմաթիվ դեպքերում իրավասու պետական մարմինները, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը և իրավապահ մարմինները, տեղեկացված լինելով ներկայացված խախտումների մասին, չեն ձեռնարկել արդյունավետ և ժամանակին միջոցներ դրանց կանխման, դադարեցման կամ պատշաճ քննության ուղղությամբ: Արդյունքում ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կոչված ինստիտուտները չեն ապահովել իրենց սահմանադրական և օրենսդրական գործառույթների լիարժեք իրականացումը:

Միաժամանակ ընտրողների մասնակցության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունը բացահայտել է պաշտոնապես արձանագրված մասնակցության տվյալների և ընտրողների ստորագրությունների միջև էական անհամապատասխանություններ: Ուսումնասիրված

շուրջ 400 ընտրական տեղամասերում արձանագրվել է մոտ 27,000 դեպք, երբ մասնակցության պաշտոնական տվյալները չեն համապատասխանել մատյաններում առկա փաստացի ստորագրություններին: Ընդ որում, խնդրի ամբողջ ծավալը հնարավոր չի եղել պարզել, քանի որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատշաճ կերպով չի հրապարակել ընտրողների ստորագրված ցուցակների մի մասը:

Վերոգրյալ հանգամանքների ամբողջական գնահատումը ցույց է տալիս, որ արձանագրված խախտումները չեն կարող դիտարկվել մեկուսացված կամ աննշան: Դրանք իրենց բնույթով, ծավալով և փոխկապակցվածությամբ ազդել են ընտրողների կամարտահայտման ազատության, քաղաքական ուժերի միջև հավասար հնարավորությունների ապահովման, ընտրական վարչարարության անկողմնակալության և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա:

Հետևաբար, առկա են բավարար հիմքեր եզրահանգելու, որ ընտրական գործընթացը չի համապատասխանել ազատ, արդար և մրցակցային ընտրությունների սահմանադրական չափանիշներին, իսկ արձանագրված խախտումների ամբողջությունը կասկածի տակ է դնում պաշտոնապես հրապարակված ընտրությունների արդյունքների արժանահավատությունն ու դրանց համապատասխանությունը ժողովրդի ազատ կամարտահայտությանը:

Ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» 77-րդ հոդվածի կարգավորումներով Սահմանադրական դատարանին

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Անվավեր ճանաչել 2026թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշումը:

Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ.

1. Լիազորագիր,
2. որպես ներկայացուցիչ հանդես եկող՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը,
3. լիազորված փաստաբանների անձը հաստատող փաստաթղթերի և փաստաբանների գործունեության արտոնագրերի պատճենները,
4. Քննչական մարմինների հաղորդագրությունների ժամանակագրությունը, դրանցում ոչ անհրաժեշտ արտահայտությունների արտահոսքը և դրա օգտագործումը նախընտրական քարոզչության մեջ նկարագրող **հավելված 1,**
5. Վարչական ռեսուրսի կիրառման փաստերի արձանագրման զեկույցների, ԿԸՀ-ին, Հակակոռուպցիոն կոմիտեին ուղղված դիմումների և դրանց պատասխանների պատճենները,
6. Կողմնակալ լրատվության վերաբերյալ ՀՌՀ ուղղված գրությունների պատճենները,
7. Էլեկտրոնային կրիչով անճշտությունների վերաբերյալ հաշվարկի ցուցակը և հաշվարկի հիմքում ընկած փաստաթղթերը,
8. Էլեկտրոնային կրիչով իրավապահ մարմինների հաղորդագրությունները, տեսանյութերը և քարոզչական նյութերը (հավելված 1-ի հղումները),
9. Էլեկտրոնային կրիչով ԿԸՀ դիմումներ և պատասխանները՝ հանձնաժողովների անդամների լիազորությունների դադարեցման վերաբերյալ:

Դիմող՝
«Հայաստան» կուսակցությունների դաշինքի
լիազոր ներկայացուցիչներ՝

Արծվիկ Մինասյան

Հովհաննես Խուդոյան

Տաթևիկ Սողոյան

19.06.2026թ.